ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՃԱՌԱԶԻՐ ՔՈ ԴՐԱՄԸ



Արևիկ

Արևիկը և Քաջիկը սովորում են նույն դասարանում:

Նրանք լավ աշակերտներ են և մտերիմ ընկերներ:

Քաջիկ

Հատուկ ուսումնական ծրագրի շրջանակում նույն դպրոցում են սովորում նաև Թոմը և Ռորին, ովքեր նոր են Հայաստան ժամանել Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

Ռորի

Թոմ

Արևիկն ու Քաջիկը, լավ տիրապետելով անգլերենին, ընկերանում են Թոմի և Ռորիի հետ:

Մի օր, դասամիջոցին, երբ Քաջիկը ճաշարանում վճարում էր նախաճաշի համար, գանձապահը վերադարձնում է նրա տված 1000 դրամանոց թղթադրամը՝ ասելով, որ կեղծ է: Քաջիկը շփոթվում է և փորձում մտաբերել, թե որտեղից իր մոտ կարող էր հայտնվել կեղծ թղթադրամ: Նրան օգնության է հասնում Արևիկը.

Արևիկը Թոմին և Որիին պատմում է ճաշարանում Քաջիկի հետ տեղի ունեցած միջադեպի մասին և ավելացնում, որ իրենց դպրոցի մյուս դասարանների աշակերտներն այցելել են ՀՀ կենտրոնական բանկի Այցելուների կենտրոն, որտեղ նրանց ծանոթացրել են հայկական դրամի՝ թղթադրամների և մետաղադրամների պաշտպանական հատկանիշներին և բացատրել, թե ինչպես պետք է տարբերել իսկական դրամը կեղծից:

Քաջիկն ու Արևիկը խնդրում են իրենց դասղեկին կազմակերպել այցելություն ՀՀ կենտրոնական բանկի Այցելուների կենտրոն և հրավիրում են Թոմին ու Ռորիին. Այցելուների կենտրոնում էքսկուրսիաները կազմակերպվում են նաև անգլերենով:

Թոմն ու Ռորին շատ են ոգևորվում. նրանք Հայաստանում պետք է երկար մնային և ցանկանում էին լավ ճանաչել հայկական դրամը:

Երեխաները ՀՀ կենտրոնական բանկի Այցելուների կենտրոնում ստանում են անհրաժեշտ տեղեկատվություն դրամի ճանաչելիության վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
The Central Bank of the Republic of Armenia

Կարևոր է իմանալ

- Հայաստանի Հանրապետության արժույթը դրամն է:
- Մեկ դրամը հավասար է հարյուր լումայի:
- Դրամի թողարկման բացառիկ իրավունքը վերապահված է ՀՀ կենտրոնական բանկին:
- Դրամը շրջանառության մեջ է դրվել 1993 թ. նոյեմբերի 22-ից:
- Դրամը թողարկվում է թղթադրամների և մետաղադրամների տեսքով:

Հայաստանի Հանրապետությունում *շրջանառության մեջ գտնվող* թղթադրամներն *են*

1

500 դրամ

Թղթադրամը
թողարկվել է 1999 թ.:

Դիմերես

Դարձերես

Դիմերեսին հայ անվանի ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի դիմապատկերն է, իսկ դարձերեսին՝ Ալեքսանդր Թամանյանի նախագծով կառուցված ՀՀ Կառավարության շենքը:

2

1 000 դրամ

Թղթադրամը թողարկվել է 1999 թ. և վերաթողարկվել 2001 թ. և 2011 թ.:

Դիմերես

2001

Դարձերես

2011

Դիմերեսին հայ մեծ գրող Եղիշե Չարենցի դիմապատկերն է, իսկ դարձերեսին՝ Երևանի Հանրապետության փողոցի շենքերից մեկը և ֆայտոն: Վերաթողարկված թղթադրամների արտաքին տեսքը մնացել է նույնը, փոխվել են միայն պաշտպանական հատկանիշները:

3

5 000 դրամ

Թղթադրամը թողարկվել է 1999 թ. և վերաթողարկվել 2003 թ., 2009 թ. և 2011 թ.:

Դիմերես

Դարձերես

2009

2012

Դիմերեսին հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանի դիմապատկերն է, իսկ դարձերեսին՝ Մարտիրոս Սարյանի Լոռվա բնությունը պատկերող կտավը: Վերաթողարկված թղթադրամների արտաքին տեսքը մնացել է նույնը, փոխվել են միայն պաշտպանական հատկանիշները:

4

10 000 դրամ

Թղթադրամը թողարկվել է 2003 թ. և վերաթողարկվել 2006 թ., 2008 թ. և 2012 թ.:

Դիմերես

2008

2012

Դարձերես

Դիմերեսին հայ մեծ գրող Ավետիք Իսահակյանի դիմապատկերն է, իսկ դարձերեսին՝ Հին Գյումրիից մի տեսարան: Վերաթողարկված թղթադրամների արտաքին տեսքը մնացել է նույնը, փոխվել են միայն պաշտպանական հատկանիշները:

5

20 000 դրամ

Թղթադրամը թողարկվել է 1999 թ. և վերաթողարկվել 2007 թ., 2009 թ. և 2012 թ.:

Դիմերես

Դարձերես

1999

2012

Դիմերեսին հայ մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանի դիմապատկերն է, իսկ դարձերեսին՝ դրվագ Մարտիրոս Սարյանի «Հայաստան» բնանկարից:

Վերաթողարկված թղթադրամների արտաքին տեսքը մնացել է նույնը, փոխվել են միայն պաշտպանական հատկանիշները:

6

50 000 դրամ

Դիմերես

Թղթադրամը թողարկվել է 2001 թ.՝ *Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի կապակցությամբ:*

Դարձերես

Դիմերեսին Սբ. Էջմիածնի Մայր տաճարի պատկերն է, իսկ դարձերեսին՝ քրիստոնեությունը խորհրդանշող եկեղեցու պատկերը՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծ արքայի ձեռքերում:

7

100 000 դրամ

Դիմերես

Թղթադրամը թողարկվել է 2009 թ.:

Դարձերես

Դիմերեսին պատկերված է Աբգար Ե թագավորը, իսկ դարձերեսին՝ Հիսուսի աշակերտ Թադեոսի կողմից Աբգար Ե թագավորին Քրիստոսի կենդանագիր պատկերով դաստառակի փոխանցման տեսարանը:

Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ է գտնվում մի քանի տեսակի մետաղադրամ

1 Շրջանառու մետաղադրամ

- Ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամ է, որը թողարկվում և վերաթողարկվում է դրամաշրջանառությունն ապահովելու նպատակով:

10 դրամ

100 դրամ

20 դրամ

200 դրամ

50 դրամ

500 դրամ

2 Շրջանառու հիշատակային մետաղադրամ

Այս մետաղադրամի և շրջանառու մետաղադրամի տեխնիկական բնութագրերը սովորաբար նույնն են, սակայն շրջանառու հիշատակային մետաղադրամը թողարկվում է ի հիշատակ որևէ պատմական կամ ժամանակակից իրադարձության և կարող է վերաթողարկվել:

100 դրամ

25 000 դրամ

Առաջին շրջանառու հիշատակային մետաղադրամը թողարկվել է 1996 թ. և նվիրված է Շախմատի 32-րդ օլիմպիադային:

1997 թ. թողարկվել է ոսկե շրջանառու հիշատակային մետաղադրամ՝ նվիրված Անահիտ աստվածուհուն:

50 դրամ անվանական արժեքով շրջանառու հիշատակային մետաղադրամներ

- ՀՀ կենտրոնական բանկը 2012 թ. հունիսի 25-ից շրջանառության մեջ է դրել ՀՀ 10 մարզերին և մայրաքաղաք Երևանին նվիրված 50 դրամ անվանական արժեքով 11 տեսակի շրջանառու հիշատակային մետաղադրամներ:

3 Հուշադրամ

Հուշադրամը թանկարժեք կամ ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամ է, որը թողարկվում է ի հիշատակ նշանակալի պատմական և ժամանակակից իրադարձությունների, և որի արտադրությունը պահանջում է հատուկ տեխնոլոգիաների կիրառում: Ի տարբերություն այլ տեսակի մետաղադրամների՝ հուշադրամը թողարկվում է սահմանափակ քանակով և չի կարող վերաթողարկվել: Բոլոր ՀՀ հուշադրամներն իրացվում են ՀՀ կենտրոնական բանկի «Դրամագետ» վաճառասրահից:

- ՀՀ առաջին հուշադրամը թողարկվել է 1994 թ.: Այն արծաթից է և նվիրված է Սարդարապատի ճակատամարտին:

4 Ներդրումային դրամ

Ներդրումային դրամը բարձր հարգի թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամ է, որն ունի մետաղի արժեքին մոտեցված վաճառքի գին և կարող է վերաթողարկվել:

- «Նոյյան տապան»-ը ՀՀ առաջին արծաթե ներդրումային դրամն է: Այն թողարկվել է 1/4, 1/2 , 1, 5, 10 տրոյան ունցիա և 1 ու 5 կգ քաշերով:

ՀՀ կենտրոնական բանկը նոր թողարկվող և վերաթողարկվող թղթադրամների պաշտպանական հատկանիշների վերաբերյալ պատրաստում է տեղեկատվական բուկլետներ, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի ճանաչի իր դրամը և զերծ մնա կեղծ դրամներ վերցնելուց:

Հայկական թղթադրամներն ունեն մինչև 17 պաշտպանական հատկանիշ, սակայն պարտադիր չէ հիշել բոլոր հատկանիշները: Բավական է իմանալ դրանցից մի քանիսը՝ կատարելով 3 պարզ գործողություն.

1. **Շոշափել թղթադրամը**
2. **Դիտել այն լուսընդդեմ**
3. **Փոխել դիտման անկյունը**

1. ՇՈՇԱՓԵԼ

Թղթադրամները մատների ծայրով շոշափելիս կարելի է զգալ որոշ նկարների և տառերի բարձրությունը (օրինակ՝ դիմապատկերի կամ անվանական արժեքն արտահայտող թվերի բարձրությունը):

2. ԴԻՏԵԼ ԼՈՒՍԸՆԴԴԵՄ

Թղթադրամները լուսընդդեմ դիտելիս կարելի է տեսնել ջրանիշն ու պատուհանական ներգծերը:

3. ՓՈԽԵԼ ԴԻՏՄԱՆ ԱՆԿՅՈՒՆԸ

Թղթադրամների ձախ մասում տեղադրված է փայլաթիթեղ: Փայլաթիթեղի վրա կան պատկերներ, որոնք թղթադրամի դիտման անկյան փոփոխության դեպքում փոխարինում են մեկը մյուսին:

Արևիկը, Քաջիկը, Թոմն ու Ռորին դուրս եկան ՀՀ կենտրոնական բանկի Այցելուների կենտրոնից դրամի մասին նոր գիտելիքներ ստացած և բավարարված:

Նրանք վստահ են, որ այլևս ոչ ոք չի կարող իրենց խաբել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
2013

Էլեկտրոնային հասցե՝ emission@cba.am
Ինտերնետային կայք՝ www.cba.am